ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

09 ապրիլի 2025թվականի N 457

«ԿՄՀՔ-ԳՀԱՊՁԲ-24/50» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ «ԿԱՊԻՏԱԼ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրազդանի համայնքապետարանի կողմից 2024 թվականի օգոստոսի 23-ին հայտարարված «ԿՄՀՔ-ԳՀԱՊՁԲ-24/50» ծածկագրով գնման ընթացակարգին Կապիտալ Գրուպ ՍՊԸ-ն ներկայացրել է մասնակցության հայտ: Բոլոր չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Կապիտալ Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, սակայն վերջինս հրաժարվում է պայմանագրով սահմանված կարգով իրականացնել ապրանքի մատակարարումը, ինչի արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից դիտվել է որպես գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման» մասին օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով և «Կապիտալ Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքված «ԿՄՀՔ-ԳՀԱՊՁԲ-24/50» ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.«Կապիտալ Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքված «ԿՄՀՔ-ԳՀԱՊՁԲ-24/50» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծել:

2. «Կապիտալ Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ «ԿՄՀՔ-ԳՀԱՊՁԲ-24/50» պայմանագրով իր պարտականությունները չկատարելու համար, ներկայացնել լիազոր մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

3. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել՝ այն ստանալու պահից հաշված երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

09 ապրիլի 2025թ.
ք.Հրազդան